

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 5-ին՝ ժամը 14:00-ին, Տաթև խոշորացված համայնքում (Սյունիքի մարզ, Շինուհայր գ., համայնքապետարան) տեղի կունենա Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում «Դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի վերակառուցում» ենթածրագրի և նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում (1-ին հանրային քննարկում):

Ենթածրագրի փաստաթղթերին հնարավոր է ծանոթանալ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պաշտոնական կայքում՝ www.atdf.am: Քննարկումը բաց է բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերի համար: